ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի սեպտեմբերմեկյան խոսքը ֆինանսատնտեսագիտական քոլեջում

Սիրելի ուսանողներ

Ցանկանում եմ ջերմորեն շնորհավորել ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի սան դառնալու առթիվ: Կարծում եմ այս նոր ուսումնական տարին Ձեզ համար կլինի հիշարժան, քանի որ մեր քոլեջ ընդունվելը ձեզ հնարավորություն է տվել հետագա կրթությունը շարունակել նոր ձևաչափով՝ ավելի կոնկրետ և նպատակային:

Հարգելի ներկաներ, ծնողներ

Ինչպես գիտեք, Հայաստանի Կառավարության որոշմամբ Ֆինանսատնտեսագիտական քոլեջը 2015 թվականից միացվել է Տնտեսագիտական մայր համալսարանին: Սա ավելի ծանրակշիռ է դարձնում քոլեջի դերը և ձեզ ընձեռում նոր հնարավորություններ:

Մենք սկսել ենք քոլեջը արդիականացնելու հսկայածավալ աշխատանք. ձեր աչքի առաջ հիմնանորոգվում է քոլեջը, աննախադեպ ձևով բարելավվում են ուսումնառության պայմանները, միջավայրը, փոխվում է աշխատառճը, նոր քայլեր են նախատեսվում կրթության որակի բարելավման համար: Հուսով եմ, որ մեր ջանքերը կտան ցանկալի արդյունք և այստեղ

ստացած կրթությունը ձեզ համար լավ ճանապարհ կհարթի դեպի կյանքի հաջորդ փուլ:

Հարգելի ծնողներ, ձեզ ևս շնորհավորում եմ այս նշանավոր օրվա առթիվ և հավաստիացնում, որ ձեր երեխաներն ապահով ձեռքերում են:

Շնորհավորում եմ բոլորիս նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ և մաղթում արդյունավետ ուսումնառություն:

Բարի երթ ձեզ:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ